ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՔԱՆԴԱԿՆԵՐ ԱՂԹԱՄԱՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔԻ ՈՐՄՆԱՇԱՐՎԱԾՔՈՒՄ

ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Աղթամարի ս. Խաչ վանքի որմնաքանդակներում կան մի ամբողջ գոտի կազմող կենդանաքանդակներ, որոնք իրենց առանձնահատկություններով տարբերվում են մյուսներից։ Այս հարցով զբաղվել է Հ. Օրբելին։ 1912 թ. լինելով տեղում, նա ծանոթացել է վանքի բոլոր քանդակներին, գնահատել դրանք և հանգամանորեն նկարագրել։ Ապա գրել է ուսումնասիրություն, ուր մեզ հետաքրքրող քանդակները քննել է «Пояс охотничьих трофеев» («Որսորդական ավարների գոտի») խորագրի տակ[1]։ Սա նրա ուսումնասիրության եզրակացությամբ պայմանավորված խորագիր է, որը, սակայն, ինչպես և դրան մղող եզրակացությունը, մեր կարծիքով, քննություն բռնել չեն կարող։ Հ. Օրբելին այդտեղ փորձում է տեսնել Կովկասում տարածված այն սովորույթի արձագանքը, որի համաձայն հաջող որսից հետո կենդանիների գլուխները կամ պրոտոմները (առջևամասերը՝ գլխով, առջևի ոտքերով և մորթու հատվածով) կախվել են տների, պալատների պատերից։ Այս արտաքին նմանությունից ելնելով՝ նա գտնում է, որ Աղթամարի քննվող քանդակների գաղափարը առնված է ուրիշ տեղից։ Մեր խորին համոզմամբ, Աղթամարի վանքում չէին կարող տեղ գտած լինել որսորդական սովորույթների այդպիսի արձագանքներ, որովհետև այնտեղ ի մի են բերված միմիայն պաշտամունքային գաղափարների վերարտադրություններ։ Պաշտամունքային գաղափարի հենքի վրա են ծագել և՛ քրիստոնեական սրբապատկերներն ու զանազան տեսարանները, և՛ որթագալարի գոտին, և՛ նույնիսկ Գագիկ Արծրունու քանդակապատկերը։ Ուստի, զուտ որսորդական աշխարհիկ կենցաղն ուղղակիորեն այնտեղ մուտք գործել չէր կարող։ Մնում է որոնումներ կատարել պաշտամունքային մոտիվների ուղղությամբ։ Այսպես մոտենալով խնդրին, տեսնում ենք, որ աղթամարյան զարդարվեստի մոտիվները բաժանվում են 2 մեծ խմբի. քրիստոնեական և հեթանոսական։ Քրիստոնեական մոտիվները, գալով աստվածաշնչային դրվագներից, իրենց մեջ են ընդգրկում Արծրունի նահատակների քանդակները և հասնում մինչև ս. Խաչը կառուցող ու երկնային թագավորի երկրային ներկայացուցիչ Գագիկ Արծրունու լուսապսակով քանդակը։ Ինչ վերաբերում է հեթանոսական պաշտամունքի հետ կապվող մոտիվներին, ապա դրանցից կարելի է հիշել հին ժամանակների ծնունդ բոլոր երևակայական էակների, ինչպես նաև զույգերով՝ դեմ-դիմաց ներկայացվող այծերի, արջերի, նապաստակների և հնաբույր այլ, քրիստոնեական գաղափարներով չբացատրվող, կենդանիների քանդակապատկերները (տախտ. III. այս մասին՝ ստորև)։ Փաստերը հիմք են տալիս պնդելու, որ որսորդական ավար համարված կենդանաքանդակները, և հատկապես պրոտոմները, նույնպես հեթանոսական պաշտամունքի ոլորտներից են դալիս։ Ավելին, դրանց հիմնական մասը ստեղծվել է Աղթամարի վանքը կառուցելուց շատ առաջ՝ նախաքրիստոնեական ժամանակներում, և դրանցում մարմնավորված են ոչ թե որսորդական սովորույթի արձագանքներ, այլ ծիսապաշտամունքային պատկերացումներ։ Հազվադեպ մի երևույթ, որի հավաստիության հարցում համոզվելու համար բանալու դեր են կատարում հատկապես պրոտոմային քանդակները իբրև եզակի փաստեր։ Ահա դրանցից մի քանիսի լուսա-

---

[1] И. А. Орбели, Избранные труды, I, М., 1968, с. 183—204.

նկարները՝ ս. Խաչ վանքի արևելյան պատից (տախտ. I)[2]։ Այստեղ որթագալարի գոտուց ներքև երևում է կենդանիների քանդակաշարը, ուր 8 կենդանիներից 4-ը պրոտոմներ են (տախտ. I, նկ. 1)։ Միևնույն պատի մի ուրիշ լուսանկարում քանդակները դիտված են ներքևից, և խիստ ցայտուն են պրոտոմներն՝ իրենց դուրս պրծած դիրքով (տախտ. I, նկ. 2)։ Բացառիկ նշանակություն ունի արևելյան պատի մեկ այլ լուսանկար։ Այստեղ երևում են 3 կեն-



Տախտակ I

դանապատկերներ, որոնցից 2-ը (վերևից՝ առաջինը և երկրորդը) պրոտոմներ են (տախտ. I, նկ. 3)։

Քանդակների քննվող շարքի մասին փոքր-ինչ ավելի պատկերացում տալու նպատակով բերենք հարավային պատի մի լուսանկար (տախտ. I, նկ. 4)։ Սրա ներքևում (աջում) Գողիաթի գլուխն է, իսկ դրանից վերև՝ կենդանական քանդակների գոտու շարունակությունը, որի ձախ կողմում երևվում է մարդկային դիմաքանդակ։ Հ. Օրբելին նշում է, թե այդ քանդակը սպանված մարդու գլուխ է, որն իբրև ռազմական ավար է տեղ գտել որսորդական ավար-պրոտոմների շարքում։ Մեր որոնումները համոզում են, որ այդ քանդակների գոտին, ոչ մի կապ չունի որսորդական և ռազմական ավարների գաղափարի հետ։ Դրանց պատմապաշտամունքային արմատները պիտի որոնել ոչ թե կովկասյան կամ ուրիշ երկրների որսորդական և ռազմական սովորույթներում, այլ տեղական հնամենի հավատալիքներում։ Հիրավի՛, այդպիսի հնամենի փաստեր կան հայոց լեռնաշխարհի հնագույն կոթողների շար-

[2] „Documenti di architettura Armenia, 8; Aghtamar", Venezia, 1974.

քում։ Խոսքը վիշապ կոչվող քարակոթողների մասին է, որոնք առավել հին ծագում ունեն, քան Վանի թագավորությունը։

Մասնագետներին վաղուց է հայտնի այն ճշմարտությունը, թե վիշապները ձկնաձև, ժամանակին ուղղահայաց դիրքով կանգնեցված քարակոթողներ են, որոնց մի խմբի վերին մասերը ներկայացնում են ցուլի, խոյի կամ դոմեշի գլուխներ՝ առջևի ոտքերով և մորթու հավելվածով. այսինքն՝ գրանցում քանդակված են պրոտոմներ։ Համոզվելու համար դիմենք համապատասխան գծանկարների համեմատությանը (տախտ. II)[3]։ Դրանցից առաջինը Աղթամարի վանքի արևելյան պատի գծանկարն է, ուր հիշատակված պրոտոմներից երևում են 4-ը։ Դրանք ավելի ցայտուն են հաջորդ գծանկարում (տախտ. II, նկ. 8)։ Սհա և դրանց երկվորյակները վիշապների գծանկարներում (տախտ. II, նկ. 2—7, 9, 10), ուր ակնհայտ է բացառիկ համապատասխանությունը թե՛ ձևի և թե՛ բովանդակության առումով։ Պարզ է, որ երկու դեպքում էլ գործ ունենք հին պաշտամունքի արտահայտության հետ, որը պահանջել է կենդանական զոհեր մատուցել հեթանոսական աստվածներին և այդ զոհերի պրոտոմները դնել բարձրադիր կոթողների վրա՝ աստվածներին ի տես։

Ուշագրավ է, որ պաշտամունքային այս հին ծեսն ու սովորությունը յուրովի շարունակվել է նաև քրիստոնեական ժամանակներում։ Նկատի ունենք մատաղ-զոհաբերությունները, երբ զոհի միսը հավասարապես բաժանվում էր ներկաներին, իսկ մորթին, գլուխը և այլ մասեր տրվում էին եկեղեցուն, սրբավայրին կամ դրանց ծառաներին՝ քահանաներին[4]։

Այս փաստերը մղում են պատասխանելու այն հարցին, թե ինչպե՞ս է եղել, որ Գագիկ Արծրունին և նրա շինարարներն Աղթամարի որմնաքանդակներում հատուկ տեղ են տվել վիշապ քարակոթողների վրա եղած և հեթանոսական իմաստ ունեցող քանդակապատկերներին։ Պատասխանը պետք է որոնել Անանուն Արծրունու այն տեղեկության մեջ, որի համաձայն Գագիկ Արծրունին, իր հերթական հաղթարշավի ժամանակ, տեսնելով «ամրոց մի յիշխանատանն Աղձնեաց ի գեօղն Կոտոմ... շինուածս ամրոցին ի հիմանց տապալեալ, զքարինս նորա բարձեալ բերէ ի վերայ մկանաց ծովուն, ընծայելով ի նիւթ շինութեան սրբոյ եկեղեցւոյն, կանգնելով փոխանակ բագնաձև պղծալից յարկացն զտաճար փառաց»[5]։ Այսինքն՝ Գագիկ Արծրունին քանդել է տալիս Աղձնյաց Կոտոմ բնակավայրի ամրոցը և դրա քարերը բերելով Աղթամար, կառուցել է տալիս ս. Խաչ վանքը։ Մասնագետները շատ են անդրադարձել այս վկայությանը՝ այդտեղ տեսնելով մի սովորական ամրոց։ Մինչդեռ առավել կարևորն այդ ամրոցի «բագնաձև պղծալից» բնութագիրն է, որով այն կապվում է կռատուն հասկացության հետ։ Ուշագրավ է նաև հեղինակի ստեղծած հակադրությունը՝ «բագնաձև պղծալից յարկացն» և քրիստո-

---

3 Գծանկարները կազմել են ուրիշները՝ այլ նպատակներով, և մենք օգտվում ենք նրանց հրատարակություններից։ 1—2-րդ գծանկարներն անվանված են վերոհիշյալ «Documeuti...» ալբոմից, իսկ 3—10-րդները՝ հետևյալ աղբյուրներից. Կ. Քուշնարյովա, Հին Դվինի սրբավայրերի պաշտամունքային կոթողների սիմվոլիկան («Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, զեկուցումների ժողովածու», հ. I, Երևան, 1981, էջ 98—105, պատկեր 10), Լ. Բարսեղյան, Գեղամա լեռների «վիշապները» («Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 181—188, նկ. 5, 6, 8, 9 և այլն)։

4 Ազապ, սեր, մատաղ հասկացությունների մասին տե՛ս Գ. Հովսեփյան, Ազապի հաստատությունը հայոց մեջ («Արարատ», 1912, էջ 997—1001)։ Ուշագրավ է, որ ազապ բառին հայերենում համապատասխանել է էրի բառը. «էրի—Զորքոտանիների առաջին ոտների ազդրի վերի գլուխը, թիակը։ Սրբ մատաղ էին անում՝ էրին տերտերին բաժին էին հանում» (Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 50)։

5 «Բովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», ՍՊԲ, 1887, էջ 297։

նեական «տաճար փառացի» միջև։ Առավել կարևորը Գագիկ Արծրունու և նրա խորհրդատուների որոշումն է՝ քանդել կռատուն-ամրոցը և նրա քարերով կառուցել Աղթամարի ս. Խաչ վանքը։

Անանուն Արծրունու երկից բացի, այդ մասին կարևոր վկայություն կա Աղթամարի վանքի «Հավաքարանում»։ Ճիշտ է, «Հավաքարանն» ունի զգալի սխալներ ու վրիպումներ, բայց կան նաև հավաստի մի շարք արժեքավոր



Տախտ. II

վկայություններ, փաստեր։ Վերջիններիցս նշենք Աղթամարի վանքի կառուցման տարեթվերը (915—921), Աղթամարի կաթողիկոսների անվանացանկի մի շարք տվյալները, կալվածագրային զանազան փաստաթղթերի ընդօրինակությունները և այլն։ Այդպիսիներից է նաև Կոտոմի ամրոց-բաղնի կռատուն լինելու մասին տեղեկությունը՝ զետեղված Անանուն Արծրունուց քաղված համապատասխան էջերում։ Ըստ այդմ, Գագիկ արքան Կոտոմի կռատուն-ամրոցն ավերելու և քարերն Աղթամար ուղարկելու աշխատանքներին զուգահեռ «շինեաց ի Կոտոմ պայծառ եկեղեցի մի բարձրուղէշ՝ ի տեղի կռոցն...»[6]։

Կոտոմի ամրոցի նաև կռատուն լինելու մասին եղած այս զույգ փաստերը և Աղթամարի պատերի շարվածքում հեթանոսական քանդակների անժխտե-

6 «Հաւաքարան անուանց կաթողիկոսաց (Աղթամարայ)», աշխատասիրությամբ՝ Մ. Մաքսուդյանցի, Էջմիածին, 1916, էջ 22։

լի առկայությունը բավարար հիմք են տալիս պնդելու, որ Աղթամարի հնարույր քանդակները, մյուս քարերի հետ միասին, տեղափոխվել են Կոտոմից։ Այստեղ անհարկի կլիներ մտածել, թե դրանք հների նմանությամբ ստեղծված նոր քանդակներ են։ Դա անհավանական է, որովհետև, եթե այդպիսիք պիտի ստեղծվեին, ապա ի՞նչն էր ստիպել եղածը ոչնչացնել և զբաղվել նմանակներ պատրաստելով։ Չմոռանանք, որ այդպիսի դեպքերում հատուկ նշանակություն էր տրվում թշնամուց խլված սրբությունների վերահմաստավորմանը։ Հենց այս նպատակով է, որ Անանուն Արծրունին, դրվատելով Կոտոմի քարերն Աղթամար բերելու և դրանցով «տաճար փառաց» կառուցելու արքայական որոշումը, այն հիմնավորում է Աստվածաշնչի օգնությամբ, գրելով՝ «Աստանօր կատարի ասացեալն ի մարգարէէն. «ո՞ր հանէ զպատուականն յանարժանէն՝ իբրև զբերան իմ եղիցի»[7]։ Այսինքն՝ Դագիկ արքան աստվածահաճո գործ է կատարել՝ արժեքավորը (քարերն ու քանդակները) խլելով անարժանից (հեթանոսությունից)[8]։

Քննված փաստերը համոզում են, որ իսկապես Աղթամարի հիշյալ քանդակները Կոտոմի հեթանոսական քանդակների թվին են պատկանել։ Այս կարծիքը հաստատելու համար ունենք ուրիշ փաստեր ևս։ Դրանցից առաջինը՝ նշված քանդակների մշակման ձևն է։ «Այդ գլուխները,— գրում է Հ. Օրբելին,— Աղթամարի վանքի մյուս բոլոր զարդաքանդակների շարքում, երևան են գալիս ոչ միայն որպես ամենապարզունակները, այլև ամենակոպիտները, կոշտ ու կոպիտները, թերակատարները և անարտահայտիչները»[9]։ Հաջորդ փաստը՝ մյուս քանդակների համեմատությամբ դրանց խիստ մաշված ու վնասված լինելն է։ Ս. Տեր-Ներսեսյանը, թեև հատուկ չի զբաղվել այդ քանդակներով, բայց հետևողականորեն նշել է դրանց սաստիկ վնասված լինելը։ Օրինակ, արևելյան պատի կապակցությամբ նա գրում է. «...կլոր քանդակված մի շարք կենդանիների ֆիգուրներն այնքան շատ են վնասված, որ դժվար է ճանաչել դրանք...»[10]։ Հ. Օրբելին, մտքով իսկ չանցկացնելով այդ քանդակների հին և տեղափոխված լինելը, ենթադրում է, թե դրանց մաշվածությունը կարելի է բացատրել վանքի պատերից խիստ դուրս պրծած լինելու, անձրևի, ձյան, արևի տակ մնալու, ուստի և ավելի ուժեղ հողմահարվելու պատճառներով։ Սա համոզիչ պատճառաբանություն չէ։ Հիշենք թեկուզ I տախտակի 3-րդ նկարի վերևի առաջին քանդակը, որը կոտրված է և ոչ թե մաշված տեղումներից ու հողմահարվելուց։ Պրոտոմ-քանդակների մաշվածությունը և վնասվածությունը պիտի բացատրել հիմնականում դրանց հնությամբ, ինչպես և Կոտոմի ամրոցը քանդելու, քարերը տեղափոխելու և դրանցով Աղթամարի տաճարը կառուցելու աշխատանքներով (անշուշտ, նաև՝ ուրիշ պատճառներով)։ Ի վերջո, որպես երրորդ փաստ կարող ենք նշել քննվող քանդակների վանքի պատերից խիստ դուրս պրծած (25—30 սմ) լինելու պարագան։ Այս ուշագրավ իրողությունն ակնառու է հատկապես I տախտակի 3-րդ նկարում։ Այստեղ փաստորեն ունենք միմյանցից աստիճանաբար հեռացող 3 մակերես. ա) պատի շարվածքի և քարերի ընդհանուր մակերեսը, բ) մյուս բոլոր քանդակների մակերեսները, գ) քննվող քանդակների մակերեսները։ Նշենք, որ Կոտոմից բերված քանդակավոր քարերն Աղթամարում չէին կարող ներսով շարվել, որովհետև արդեն պատրաստի ձևեր էին և պետք է իրենց կամքը թելադրեին շինարարներին։

Մեր եզրակացությունը պարզ է. Աղթամարի վանքի քննվող քանդակները Կոտոմի կռատուն-ամրոցից բերված հին հեթանոսական քանդակներ են։ Այստեղից հարց է առաջանում. հնարավո՞ր էր արդյոք հեթանոսական

---

7 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», էջ 297։

8 Նույն տեղում։

9 И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 190։

10 Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 84։

կուռքերն օգտագործել քրիստոնեական տաճարի որմնաշարվածքում։ Խոսքը գաղափարական-դավանաբանական հնարավորության մասին է։ Այո, հնարավոր էր։ Հանրահայտ է, թե սկզբնական շրջանում քրիստոնեության թշնամանքը որքան անողոք ու դաժան էր հեթանոսության նկատմամբ։ Բայց, միաժամանակ, հայտնի է, որ նույն շրջանում երբեմն էլ հին սրբավայրերը մասնակի փոփոխման ենթարկվելով և օրհնվելով, վեր էին ածվում քրիստոնեական սրբավայրերի։ Ինչ վերաբերում է հաջորդ ժամանակներին, հատկապես IX—X դդ., ապա ասենք հետևյալը. երբ արաբական լծից ազատվող ու ազատված Հայաստանում վերականգնվում էր անկախությունը, մեծ փոփոխություններ էին տեղի ունենում ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ միտք ու մշակույթի բնագավառներում։ Այս ամենի շնորհիվ է, որ մեզ են հասել հին ու հեթանոսական ժամանակների հուշարձաններ, անշուշտ, ենթարկված քրիստոնեական վերամշակումների։ Այդպիսիներից են, օրինակ, Վանի թագավորության ժամանակների մի շարք կոթողներ՝ հետագայում փորագրված խաչաղարդերով։ Որպես օրինակ, հիշենք Գ. Մելիքիշվիլու հրատարակած սեպագիր արձանագրությունների ժողովածուի 20, 24, 60-րդ բնագրերի լուսանկարները[11]։ Առավել ուշագրավ են այն կոթողները, որոնք վերամկրտության խաչադրոշմներով (նաև առանց այդպիսիների) զետեղվել են քրիստոնեական եկեղեցիների պատերի շարվածքներում կամ պահպանվել դրանց հարկի ներքո։ Այդպիսիներից են նույն ժողովածուի 20, 21, 28, 66, 73, 110, 128-րդ արձանագրությունները կրող կոթողները[12]։ Բարեբախտաբար դրանցից մեկի վրա նշմարվում են «Տ[է]ր Գրիգոր» բառերն ու «ՆԻԺ» (977) թվականը[13]։

Հետաքրքրական է, որ անգամ մահմեդականները քրիստոնեական եկեղեցիներից վերցրած նման քարերն ու միջնադարյան խաչքարերը հյուսել են իրենց մզկիթների շարվածքներում։ Այդպիսիք եղել են, օրինակ, Վանի Խոսրով-ջամի կոչված մզկիթում։ Դրանցից մեկը սեպագիր արձանագրություն է՝ հետագայում արված խաչի և «ՅՂԲ» (943) թվականի փորագրությամբ[14], իսկ մյուսը՝ խաչքար է մոտավորապես նույնքան հին հայերեն արձանագրությամբ[15]։

Վերը նշված եղանակով քրիստոնեացված են համարվել նաև վիշապ քարակոթողները։ Որպես օրինակ հիշենք Ն. Մառի և Յա. Սմիռնովի հրատարակած № 1 վիշապի լուսանկարը[16], դրա գծանկարը[17] և համապատասխան հիշատակությունը[18]։ Այստեղ, բացի խաչազարդից, կան նաև հայկական տառեր։ Այս և նման ուրիշ փաստեր ցույց են տալիս, որ դեռ այն ժամանակներից սկսած, երբ կառուցվել է Աղթամարի ս. Խաչ վանքը, տարածված սովորություն է եղել հին հեթանոսական հուշարձանները վերամկրտելով համարել քրիստոնեացած, իսկ առանձին քանդակներ հյուսել եկեղեցիների պատերի մեջ։

Ասվածից ինքնին հասկանալի է, որ Գագիկ Արծրունին և նրա օգնականները բավարար հիմք են ունեցել Կոտոմի կուռքերն Աղթամարի վանքի որմ-

---

11 Г. А. Меликишвили, Урартские клинописные надписи, М., 1960. рис 1, 2, 21.

12 Նույն տեղում, էջ 131, 135, 150, 181, 185, 204, 232։

13 Նույն տեղում, նկ. 1։

14 ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունք, լուսանկարների բաժին, Ս. Տեր-Ավետիսյանի ֆ., ալբոմ II, № 8152։

15 Նույն տեղում, ալբոմ III, № 1063։

16 Н. Я. Марр и Я. И. Смирнов, Вишапы, Л., 1931, с. 61.

17 Նույն տեղում, տախտ. 2։

18 Նույն տեղում, էջ 87։

Նկ. 1

նաշարվածքում օգտագործելու համար[19]։ Ըստ երևույթին հենց այս ժամանակներից էլ սկզբնավորվում և ձևավորվում է հայկական վերածնունդը՝ ի դեմս Գագիկ Արծրունու շինարարական աշխատանքների, Նարեկա վանքի միաբանության մատենագրության, Անի քաղաքի խոյացման, Վարգան Անեցու, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Սարկավագի ստեղծագործությունների, «Սասնա Ծռեր» էպոսի, թոնդրակյան շարժման և նման այլ երևույթների։ Ահա այս շրջանի մշակույթի մեջ յուրահատուկ տեղ են գրավում ոչ միայն վաղեմի ժամանակներից վերապրածները, այլև նորովի վերածնված հեթանոսական գաղափարներն ու պատկերացումները։ Անհամեմատ պերճախոս են զարդարվեստի բնագավառը ներթափանցած նախաքրիստոնեական մերժված մոտիվներն՝ իրենց բազմազանությամբ, առատությամբ և սիրվածությամբ։ Հենց Աղթամարի որմնաքանդակներում, քննվող քանդակներից բացի, մեծ տեղ են գրավել հեթանոսական, հին արևելյան բազմաթիվ կենդանապատկերներ։ Ահա դրանցից մի քանիսի գծանկարները՝ նկարիչ Փանոս Թերլեմեզյանի վերարտադրությամբ (տախտ. III)[20]։ Դրանցից առաջին 3-ը զուտ հեթանոսական ժամանակների ծնունդ են. 4-րդը նույնպես հին դարերի արդյունք է։ Ինչ վերաբերում է Եվայի և օձի պատկերաքանդակին, ապա դա աստվածաշնչային թեմայի նախաքրիստոնեական դիցաբանության եղակի ու մեծարժեք արտահայտություն է։ Այսքանը բավական է համոզվելու, թե ինչպես հեթանոսական գաղափարների հետ կապված քանդակների կողքին հեշտությամբ իրենց տեղը կարող էին գրավել նաև հեթանոսական պրոտոմները և այլ քանդակներ։

Վերը նշեցինք, որ մեզ հետաքրքրող քանդակների շարքում առկա է նաև մարդկային մի գլխի քանդակ։ Հ. Օրբելու կարծիքը՝ նրա ռաղմական ավար լինելու մասին, ընդունելի համարվել չի կարող։ Այժմ, երբ պարզվեց Կոտոմի ամրոցի նաև կռատուն լինելու փաստը, չենք կարող չխորհել, որ ի դեմս մարդկային գլխի (որի մորուքը կոտրված է), ունենք հեթանոսական աստծու քանդակապտակեր։ Ըստ երևույթին, դա Արամազդ աստծու ստեղծած առաջին մարդու քանդակն է։ Այսպես ենք ենթադրում՝ հենվելով այն փաստի վրա, որ կենդանաքանդակներն աղթամարյան կառույցում դասավորված են քրիստոնեական նախահոր՝ Ադամի երկու կողմերում։ Հավանաբար, Ադամը նրա փոխարինողն է։ Սակայն այս կարծիքը ուրիշ փաստերի օգնությամբ պնդել չենք կարող, որովհետև այդպիսիք չկան։ Կարելի է մտածել նաև հեթանոսական որևէ աստծու քանդակի առկայության մասին։ Այս առումով ուշագրավ է Փ. Թերլեմեզյանի մի վկայությունը։ 1914 թ. լինելով տեղում՝ նա ելարանի օգնությամբ մոտեցել է քանդակներին, զննել է դրանք և նշել, թե «...ասորոց շարության աստծո նմանողությամբ մի բարձրաքանդակ կար, որի աչքի մեջ կապույտ հախճապակի էր ագուցված»[21]։ Հավանաբար խոսքը նույն քանդա-

---

19 Մասնագետները վաղուց են նկատել, որ վիշապները, Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները և խաչքարերը կառուցողական առումով ունեն ընդհանրություններ։ Այժմ բավարար հիմք է ստացվում պնդելու, որ խաչքարերը ոչ միայն կառուցողական ձևով, այլև վերոհիշյալ վերամկրտությունների եղանակով են ծնվել՝ հատկապես սեպագիր արձանագրությունների կողողներից։ Այս առումով բացառիկ արժեք ունի Վարագա վանքի պատում հյուսված մեծ խաչազարդով սեպագիր արձանագրություններից մեկը (Ս. Տեր-Ավետիսյանի ֆ., ալբոմ III, № 1033) և Վանի թանգարանում պահվող գողտրիկ, մեծ խաչաքանդակով և այլ զարդերով մի ուրիշ կողող (տե՛ս նկ. 1). („Anatolian studies", vol. VIII, Ankara—London, 1958, p. 240).

20 Այս գծանկարները համարվում էին կորած, բայց վերջերս հայտնաբերվեցին Մաշտոցի անվան մատենադարանի գրադարանի տպագիր ալբոմների շարքում (տե՛ս «Սովետական Հայաստան», 1982, № 8)։

21 Հայաստանի պետական պատկերասրահ, հուշագրային-ձեռագրային բաժին, ֆ. 30 (Փ. Թերլեմեզյանի ֆ.), Ի—423, № 160, էջ 371 («Կյանքիս հուշերը»)։

կի մասին է։ Եթե պարզվի, որ այն հեթանոսական որևէ աստծու կամ հերոսի չի պատկերում, ապա մնում է մտածել մարդկային զոհաբերության մասին և ընդունել, որ մարդու գլխաքանդակը դասված է եղել կենդանիների և հատկապես պրոտոմների շարքը՝ իբրև զոհաբերության խորհրդանշան։

Այդ, ինչպե՞ս են ներդաշնակվել հեթանոսական այդ կուռք-քանդակները Աղթամարի քրիստոնեական քանդակների համակարգին։ Առաջին հայացքից

Տախտակ III

անհավանական թվացող այս իրողությունն իսկույն հասկանալի է դառնում, երբ մտաբերում ենք համապատասխան հին ու նոր (այսինքն՝ հեթանոսական և քրիստոնեական) գաղափարների ներդաշնակումը՝ մանրանկարչության մեջ և հատկապես խորաններում, հիսախորաններում ու լուսանցքաղարդերում։ Քանի որ այդ մասին մենք արդեն ունենք հիմնավոր փաստարկներ[22], ուստի այստեղ այսքանը համարում ենք բավարար։ Ընդգծենք միայն, որ ժամանա-

22 Ա. Շ. Մնացականյան, Հայկական զարդարվեստ. Երևան, 1955, նույնի՝ Դիցաբանական եղջերուն միջնադարյան հայ արվեստում («Բանբեր Մատենադարանի», № 12, Երևան, 1977)։

կի պահանջով հին ավանդույթները քրիստոնեական մշակույթի մեջ ընդգրկելու հնարավորություն ստեղծվեց հատկապես IX—X դդ. և ամենից առաջ այլաբանական մտածելակերպի օգնությամբ։ Եղանակ, որ թույլ էր տալիս հեթանոսական ուժերն ու գաղափարները ոչ միայն պարտված համարել, այլև դիտել որպես նվաճված, վերամկրտված և քրիստոնեական գաղափարներին ծառայող ուժեր։ Մտածողության այս եղանակն իր ծնունդն էր առել Աստվածաշնչի Հին կտակարանի և Նորի միջև կապ ու հարազատություն տեսնելու մեկնաբանությունների շնորհիվ և գնալով ուղի էր հարթում դեպի տեղական հին հավատքն ու պատկերացումները՝ քրիստոնեաբար յուրացնելու նպատակային աշխատանքները։ Մի՞թե հենց այդ իրողության արդյունքը չէր նույն ժամանակներում, Աղթամարից ոչ հեռու, Նարեկա վանքի հովանու ներքո հեթանոսական աշխարհիկ «Ներգ Ներգոցը» իբրև քրիստոնեական եկեղեցուն և Քրիստոս աստծուն նվիրված սիրո պոեմ ներկայացնելու Գրիգոր Նարեկացու փորձը (այդ փորձն էլ ուներ հին հիմքեր)։

Մտածողության նման եղանակներն էին, որ հիմք էին տվել Գագիկ Արծրունուն և նրան շրջապատող ժամանակի մտավորականության առաջնորդներին Կոտոմի կռատունը քանդել և դրա քարերն ու քանդակները տանել Աղթամար՝ փառաց տաճար կերտելու նպատակով։ Քանի որ այդ քայլի համար տեսական-դավանաբանական խիստ արգելքներ այլևս չեն եղել, բնականաբար, դյուրին է եղել Կոտոմի կուռքերն Աղթամարի ս. Խաչ վանքի շարվածքներում զետեղելու գործը։

Այսուամենայնիվ, ուշագրավ է, թե ինչպե՞ս է իրականացվել առաջադրված խնդրի լուծումը։ Դրա համար անդրադառնանք վանքի արևելյան պատի կենտրոնում զետեղված, դրախտի անդրանիկ բնակիչ, Ադամ նախահոր քանդակապատկերին։ Նրա աջ ու ձախ կողմերում տեղ են գտել հեթանոսական կենդանաքանդակները, իսկ տեսարանի ընդհանուր իմաստը արձանագրությամբ պատշաճեցվել է «Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց և գազանաց» մտքին։ Դա առնված է Աստվածաշնչի Ծննդոց գրքի Բ գլխի 20-րդ և հաջորդ տներից, ուր ասված է. «Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց և ամենայն թռչնոց երկնի, ամենայն գազանաց վայրի»։ Այս եղանակով են, ահա, Կոտոմի կուռքերը ենթարկվել քրիստոնեական գաղափարներին և տեղ գտել աստվածաշնչային գաղափարաքանդակների շարքում։ Դրանով, ըստ ժամանակակիցների պատկերացումների, Աղթամարի ս. Խաչ վանքն է՛լ ավելի հզոր է համարվել, է՛լ ավելի ուժ ու կարողություն ենթադրել տալով Արծրունյաց թագավորությանը։

Փաստերը ցույց են տալիս, որ հեթանոսական մշակույթի յուրացման այս ուղին, տարբեր եղանակներով, թափանցել է այն ժամանակների մշակութային բոլոր բնագավառները և իրենով խորհրդանշել հայկական վերածնության այգաբացը հայոց լեռնաշխարհում։

Վերը կատարված քննությունը, կարծում ենք, առհասարակ կարևոր նշանակություն ունի վիշապ քարակոթողների, կռատուն-ամրոցների, կուռքքանդակների, քրիստոնեական այլաբանական մտածողության, Վերածննդի ժամանակների աշխարհայացքի և նման շատ ուրիշ խնդիրների ուսումնասիրության համար։ Հիմք կա, օրինակ, կարծելու, որ Կոտոմի կռատան պատերի վրա էլ պրոտոմ-քանդակները զետեղված են եղել համանման դասավորությամբ։ Այս առումով, և ընդհանրապես, հետաքրքրական է նաև Անանուն Արծրունու «բագնաձև պղծալից յարկացն» դարձվածքի կապակցությամբ «բագնաձև» բառին տրված բացատրությունը. «որ ինչ ունի զձև բագնի», իսկ «բագին» բառն էլ մեկնաբանված է իբրև «սեղան զոհից», «որպէս մեհեան, տաճար կռոց», «կանգնեալ ի քարանց, յորոյ վերայ լենէր սովորաբար առ հեթանոսս և պատկեր կռոց...»[23]։

Բայց առայժմ սահմանափակվենք այսքանով։

---

23 «Նոր բառգիրք հայկազյան լեզվի», Ա, Վենետիկ, 1837, էջ 400։

СКУЛЬПТУРНЫЕ ПАМЯТНИКИ ЯЗЫЧЕСКИХ ВРЕМЕН В БАРЕЛЬЕФАХ АХТАМАРСКОГО МОНАСТЫРЯ СУРБ ХАЧ

АСАТУР МНАЦАКАНЯН

Резюме

И. А. Орбели посвятил специальное исследование барельфам ахтамарского монастыря Сурб Хач (св. Креста). Одну из глав, посвященную исследованию фризов, он назвал «Пояс охотничьих трофеев». Изображенные во фризе скульптуры животных, по его мнению, являются отголосками распространенного по Кавказу и имеющего охотничье происхождение обычая, когда после удачной охоты протомы охотничьей дичи (головы, передние ноги, части шкур) вешали на стены.

Нам кажется, что ахтамарские животные барельефы не являются отголосками охотничьих обычаев, а есть изображение древней культово-ритуальной церемонии, связанной с жертвоприношением животных. Параллели ахтамарских протомных скульптур необходимо искать именно в Армении, в памятниках, именуемых вишапами. На вишапах, в числе иных скульптурных изображений, встречаются протомы быков, баранов, буйволов и других животных. Часть фризов Сурб Хача, в частности протомы, привезены из селения Котом в Алдзнике. Бывшая здесь и разрушенная по велению царя Гагика Арцруни крепость, каменная кладка которой была перевезена на остров Ахтамар для постройки монастыря Сурб Хач, являлась также капищем. Именно на каменной кладке капища находились исследуемые языческие барельефы.